

ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ՀՀ պետական կառավարման ակադեմիայի դոկտորանտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԼ ՄԻԳՐԱՅԻԱՆ ԵՎ ԳՐԱ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԻՐԱՎԱԿԱՆ ԱՍՊԵԿՏՆԵՐԸ

Հոդվածում քննության է առնվում Հայաստանի Հանրապետությունում ինտելեկտուալ միգրացիայի հիմնախնդիրները՝ կապված դրանց սահմանադրաիրավական ասպեկտների հետ: Հոդվածի շրջանակներում նաև անդրադարձ է կատարվում պոստմոդեռն հասարակության պայմաններում գիտելիքի տեղ ու դերի, «սոցիումի մրցունակության» և ինտելեկտուալ միգրացիայի կառավարման սահմանադրաիրավական հիմնահարցերին:

Հիմնաբառեր՝ «Ուղեղների արտահոսք», ինտելեկտուալ միգրացիա, մարդկային կապիտալ, պոստմոդեռն հասարակություն, սոցիալական շուկայական տնտեսություն, «սոցիումի մրցունակություն»:

Ինտելեկտուալ միգրացիան կա՛ն այս, կա՛ն այն երկրից բարձրորակ մասնագիտական կադրերի արտահոսքը ընդհանուր միգրացիոն երևույթների անբաժանելի մասն է: Սակայն, ի տարբերություն մեծաքանակ միգրացիոն հոսքերի՝ ինտելեկտուալ միգրացիան նրանցում ընդգրկված մարդկանց քանակով անհամեմատ փոքրաթիվ է: Միաժամանակ, որևիցե երկրից ինտելեկտուալների այլ պետություններ մշտական բնակության մեկնելը իր հետևանքներով առավել բացասաբար է անդրադառնում արտահոսքի երկրի ընդհանուր զարգացման վրա: Դա բացատրելի է, քանի որ հայրենիքը լքում են տնտեսության, տեխնիկայի, գիտության, մշակույթի բնագավառների բարձրորակ մասնագետները, որոնց պատրաստման համար տևական և ծախսատար ջանքեր են գործադրվել: Պետք է նշել, որ «ուղեղների արտահոսք» (Brain Drain) հասկացությունն առաջին անգամ կիրառվել է 1950-ականների սկզբներին, երբ անգլիացի գիտնականները մասսայաբար տեղափոխվում էին Ամերիկայի Միացյալ Նահանգներ: «Ուղեղների արտահոսքը» (այլ կերպ անվանվում է ինտելեկտուալ միգրացիա) դա մի գործընթաց է, որի արդյունքում պետությունից (ներառյալ մարզից, շրջանից և այլն) արտագաղթում են գիտնականները, մասնագետները և բարձր որակավորում ունեցող աշխատողները՝ կապված տնտեսական, սոցիալական, քաղաքական և այլ պատճառներով²:

Եթե միգրացիոն մյուս երևույթների, ասենք աշխատանքային միգրացիայի, բացասական հետևանքները պետության բնականոն զարգացման ընթացքի խաթարմանը զուգահեռ ի հայտ են գալիս անմիջականորեն, ապա այլ է ինտելեկտուալ միգրացիայի պարագայում: Յուրաքանչյուր երկրի համար ինտելեկտուալ միգրացիայի բացա-

սական հետևանքները դրսևորվում են տարիների ընթացքում:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2015 թվականի դեկտեմբերի 06-ի փոփոխություններով) 11-րդ հոդվածում նշված է, որ. «Հայաստանի Հանրապետության տնտեսական կարգի հիմքը սոցիալական շուկայական տնտեսությունն է, այն է՝ սոցիալական-տնտեսական քաղաքականության մոդել, որը կոչված է մրցունակ տնտեսության հենքի հիման վրա միացնել ազատ նախաձեռնողականությունը սոցիալական առաջընթացի հետ, ինչն էլ ապահովվում է տնտեսական ցուցանիշներով»³: Այս տնտեսական մոդելը ելնում է այն պահանջմունքից, որ ո՛չ պետությունը, ո՛չ մասնավոր տնտեսվարող սուբյեկտները իրավունք չունեն լիարժեք վերահսկելու տնտեսությունը, քանի որ նրանք կոչված են ծառայելու մարդկանց (պետության բնակչությանը) և այս տնտեսական մոդելի հիմնական բնութագրիչներից մեկն էլ այն է, որ այն կոչված է ապահովելու պետության բնակչության լիարժեք և իրական զբաղվածությունը (ներառյալ՝ անձի ազատ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու պահանջմունքը): Այսպիսով, Հայաստանի տնտեսական նոր կարգի ձևավորման համար էական նշանակություն ունի մրցունակ մարդկային կապիտալը, այն է՝ գիտելիքների, հմտությունների և կարողությունների համակցություն, որն օգտագործվում է մարդու և ամբողջ հասարակության բազմազան պահանջմունքների բավարարմանը: Մարդկային կապիտալը լայն իմաստով, դա տնտեսության, հասարակության և ընտանիքի զարգացման արտադրողականության ինտենսիվ գործոնն է, որն իր մեջ ներառում է աշխատանքային ռեսուրսների կրթված մասը, գիտելիքները, մտավոր և կառավարչական աշխատանքի

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

գործիքակազմը, բնակության միջավայրը և այն աշխատանքային գործունեությունը, որը ապահովում է մարդկային կապիտալի՝ որպես զարգացման արտադրական գործոնի արդյունավետ և ռացիոնալ գործունեությունը⁴։ Այսպիսով՝ պետք է փաստենք, որ Հայաստանի տնտեսական նոր կարգը միգրացիոն քաղաքականության մշակման ու իրագործման բազիսն է հանդիսանում, որի արդյունքում ներգաղթի և արտագաղթի իրավական կարգավորումը պետք է բխի Հայաստանի տնտեսական նոր կարգով պայմանավորված մարդկային կապիտալի ձևավորման և պահպանման շահերից, այն է՝ պետության աշխատուժի ինքնաբավություն, աշխատուժի կրթական մակարդակի բավարարում, ներգաղթյալ-աշխատողների մշակութային և կրթական հարմարեցում տեղական շուկայի պահանջներին և այլն։

Պոստմոդեռնիստական սոցիոլոգիայի հիմնադիրներից մեկը՝ Ջիզմունդ Բատումանը, ժամանակակից հասարակությունն անվանում է «պոստմոդեռն» առանձնացնելով դրա ներքոիշխյալ բնութագրիչները՝ մշակութային բազմազանություն, մշտապես տեղի ունեցող փոփոխություններ, ցանկացած տեսակի իշխանական համընդհանրության բացակայություն, զանգվածային լրատվության միջոցների և դրանց արտադրանքների դոմինանտություն, հիմնական իրականության բացակայություն, քանի որ վերջին հաշվով, բոլորը իրենցից ընդամենը սիմվոլ են ներկայացնում։ Միևնույն ժամանակ Ջիզմունդ Բատումանը նշում է, որ. «Գիտելիքի ուսումնասիրությունը (հետազոտումը) առանձնակի արժեք է ստանում, որը պոստմոդեռնի պայմաններում արժևորվում է կյանքի կենսական ռեսուրսների և դրանց ընտրության հնարավորության մատչելիությամբ, իսկ գիտելիքն էլ իր հերթին դառնում է կոնֆլիկտների առաջացման հիմնական աղբյուրը՝ ուղղված անձանց (ազենտների) միջև ռեսուրսների բաշխմանը»⁵։

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության պրեամբուլայում նշված է. «Հայ ժողովուրդը, հիմք ընդունելով Հայաստանի անկախության մասին հռչակագրում հաստատագրված հայոց պետականության հիմնարար սկզբունքները և համագրային նպատակները, իրականացրած ինքնիշխան պետության վերականգնման իր ազատասեր նախնիների սուրբ պատգամը, նվիրված հայրենիքի հզորացմանը և բարգավաճմանը, ապահովելու համար սերունդների ազատությունը, ընդհանուր բարեկեցությունը, քաղաքացիական համերաշխությունը, հավաստելով հավատարմությունը համամարդկային արժեքներին, ընդունում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը»։

Վերլուծության ենթարկելով վերոգրյալը՝ կա-

րող ենք փաստել.

ա) Պետության կողմից սերունդների ազատությունը, ընդհանուր բարեկեցությունը և քաղաքացիական համերաշխությունն ապահովելու պարտավորությունն ինքնանպատակ չէ, քանի որ ցանկացած սոցիում ձգտում է կայուն, ներդաշնակ և հարատև զարգացման, որը մենք կանվանենք «**սոցիումի մրցունակություն**», այն է՝ *պատմական հողվություն՝ պատմաքաղաքական, իրավական, սոցիալական, տնտեսական, դեմոգրաֆիկ և այլ գործոններով պայմանավորված սոցիումի արագ և ներդաշնակ ալլակերպումը ժամանակի մարտահրավերներին, որի արդյունքում ապահովվում է տվյալ սոցիումի «ինքնությունը»՝ ապահովելով կայուն մրցակցությունը այլ սոցիումների «ինքնության» հետ (Հեղինակի սահմանում)։*

բ) Պոստմոդեռն հասարակության պարագայում պետության կողմից սոցիումի մրցունակության ապահովման բազիսային տարր է հանդիսանում ազգային մտավոր կապիտալի կառավարումը, որն ամրագրված է նաև Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2015 թվականի դեկտեմբերի 06-ի փոփոխություններով) 15-րդ հոդվածի 1-ին մասում՝ պետությունը խթանում է մշակույթի, կրթության և գիտության զարգացումը։

Արդարության համար պետք է նաև փաստենք, որ, ինչպես մեզ հայտնի է իրավունքի տեսությունից, պրեամբուլաները որպես այդպիսին նորմատիվ իրավական ակտեր չեն՝ դրանցում իրավունքի նորմեր չկան, համընդհանուր և համապարտադիր վարքագծի կանոնը բացակայում է, բացառություն չէ նաև Հայաստանի Հանրապետության Սահմանադրության պրեամբուլան։ Սակայն, պետք է նշենք, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության պրեամբուլան կոնկրետ պատմական ժամանակահատվածում ժողովրդի քաղաքական-իրավական արժեհամակարգի և աշխարհայացքի արտացոլումն է հանդիսանում և հետագա իրավական դաշտի ստեղծման կողմնորոշիչ բազիսը են հանդիսանում, քանի որ վերջինս իրավակիրառ պրակտիկայում անհրաժեշտ է Սահմանադրության նորմերի մեկնաբանման համար։

Բարձրորակ մասնագետների քանակի նվազումը բացասաբար է անդրադառնում կրթության ոլորտի զարգացման, գիտահետազոտական աշխատանքների իրականացման վրա, որոնք խոչընդոտում են նոր տեխնիկայի և տեխնոլոգիաների ներդրմանը։ Այդ երևույթի բացասական հետևանքները հանգեցնում են նաև «դոնոր» երկրների մշակույթի և, ընդհանրապես, ինտելեկտուալ միջավայրի զգալի նեղացմանը։

Այլ պատկեր է ներկայացնում ինտելեկտուալ միգրանտներ ընդունող երկրների հասարակական

www.journal.lawinstitute.am

կյանքի իրավիճակը: Ինտելեկտուալ միգրանտների քանակի ավելացումը, որպես կանոն խթանում է արդիական մակարդակով ուսուցման կազմակերպմանը, նպաստում տվյալ երկրում գիտության, տեխնիկայի զարգացմանը: Նորեկ ինտելեկտուալներն իրենց նպաստ են բերում նաև մշակույթի զարգացմանը, այդ ասպարեզում ստեղծագործական մթնոլորտի հաստատմանը:

Վերջին ժամանակներում ինտելեկտուալ միգրացիայի հիմնահարցերը դարձել են իրավագետների և սոցիոլոգների առանձնակի ուսումնասիրության առարկան: Հաճախ այն քննարկվում է ընդհանուր միգրացիոն գործընթացների ուսումնասիրության շրջանակներում: Սակայն, միաժամանակ, ուսումնասիրողները բացահայտում են ինտելեկտուալ միգրացիայի առանձնահատկությունները: Առավել հեռատես ուսումնասիրողները ձեռնամուխ են լինում ինտելեկտուալ միգրացիայի ուսումնասիրությանը որպես առանձին, մի շարք հատկանիշներով միգրացիոն ընդհանուր երևույթից տարբերվող ֆենոմեն:

Կարծում ենք՝ հիմնավոր է վերջին մոտեցումը: Ինտելեկտուալ միգրացիան ընդհանուր միգրացիոն երևույթներից առանձնանում է չորս հատկանիշներով.

1. ինտելեկտուալ միգրանտները, որպես կանոն, լավ տեղեկացված են նոր միջավայրում սպասվելիք աշխատավայրի և բնույթի վերաբերյալ,
2. ինտելեկտուալ միգրանտներին բնորոշ է ինտերնետի հնարավորությունների օգտագործմամբ և անձնական հանդիպումների միջոցով կապերի հաստատումը ապագա գործընկերների հետ: Ակադեմիական ոլորտում գործունեության ծավալման դեպքում գործընկերները միմյանց իրազեկում են գիտական հրատարակումների, գիտաժողովներում ելույթների բովանդակության վերաբերյալ,
3. ինտելեկտուալ միգրանտները, որպես կանոն, պահպանում են կապը հայրենիքի հետ,
4. կրթության բարձր մակարդակը, լեզուների իմացությունը ինտելեկտուալ միգրանտներին հնարավորություն է ընձեռում դուրիս ինտեգրվել նոր միջավայրում⁷:

Չնայած ինտելեկտուալ միգրացիան զգալիորեն տարբերվում է ընդհանուր միգրացիոն երևույթներից, այնուամենայնիվ, այն տարատեսակ գնահատականի է արժանանում ինչպես «դոնոր», այնպես էլ ընդունող երկրների հասարակության կողմից: Հաճախ ինտելեկտուալ միգրացիայի նկատմամբ մոտեցումները ունեն մերժողական բնույթ, երբեմն էլ հասարակական տարբեր շերտերի կողմից ընկալվում են դրականորեն:

Տարիներ առաջ ինտելեկտուալ միգրացիան

հասարակության միայն նեղ շրջանակների ուշադրության առարկան էր, քանի որ փոքր էր իր ծավալով և սահմանափակ ընդունող երկրի բնականոն զարգացման վրա ունեցած ազդեցությամբ: Ներկայումս, ընդհանուր միգրացիոն հոսքերի ավելացման հետևանքով՝ ինտելեկտուալ միգրացիան դարձել է երկրների բնակչության լայն խավերի քննարկման առարկա: Այսպես կոչված միգրացիոն «դոնոր» երկրներում բնակչության բացարձակ մեծամասնությունը ինտելեկտուալ միգրացիան դիտում է որպես «ուղեղների արտահոսք»: Առավել ևս, որ արտերկիր մեկնած ինտելեկտուալները, որպես կանոն, չեն վերադառնում հայրենիք: Եթե ընդունող երկրներում ինտելեկտուալ միգրանտների առկայությունը անմիջականորեն նշմարելի չէ տնտեսության, կրթության և այլ ոլորտների զարգացման գործում, այն իր ազդեցությունն է թողնում տարիների ընթացքում, ապա «դոնոր» երկրներից ինտելեկտուալների արտահոսքի հետևանքները ի հայտ են գալիս գրեթե անմիջականորեն: Տնտեսության, կրթության, գիտության, մշակույթի ոլորտներում նվազում է բարձրակարգ մասնագետների քանակը: Դրա հետևանքով խաթարվում է «դոնոր» երկրների բնականոն զարգացումը: Ավելին, այդ ամենի հետևանքով, աղճատվում են հասարակական հարաբերությունները՝ խաթարվում բնակչության կենցաղային մշակույթը, նվազում է հանրության իրավագիտակցությունը:

Նկատելի է նաև, որ միգրացիան առանձին «դոնոր» երկրներում ինտելեկտուալ միգրացիայի նկատմամբ դրսևորվում է հանդուրժողական մոտեցում: Դրա պատճառը երկուսն են.

ա) հասարակական կարծիքում տիրապետում է այն մոտեցումը, որ երիտասարդները ուսման մեկնելով առավել զարգացած երկրներ, բարձրացնում են իրենց մասնագիտական որակավորումը.

բ) միաժամանակ առկա է այն համոզմունքը, որ սեփական ինտելեկտուալները կապը չեն խզի հայրենիքի հետ և ամեն կերպ կաջակցեն վերջինիս զարգացմանը:

Այդ իմաստով գովելի է, որ արտասահմանում զգալի հեղինակություն վայելող հայ գիտնականները հաճախ են այցելում հայրենիք, մասնակցում գիտաժողովներին, ԲՈՒՀ-երում անցկացնում պարապմունքներ: Բժիշկները, թեպետ և կարճ ժամանակով, իրենց փորձն են փոխանցում Հայաստանյան գործընկերներին, իսկ մշակույթի գործիչներն էլ հանդես են գալիս հայ հանդիսատեսի առջև: Հայ հասարակության կողմից դրականորեն է ընկալվում նաև այն, որ հայ ինտելեկտուալները, արտերկրներում արժանանալով բարձր վարձատրության, նյութապես օժանդակում են Հայաստանում ապրող իրենց հարազատներին:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Վերջին տասնամյակներում, պայմանավորված նաև գիտատեխնոլոգիական առաջընթացով, առաջնակարգ նշանակություն է ստանում սփյուռքի մտավոր կապիտալը՝ որպես տվյալ պետության զարգացման գրավական: Այս տեսանկյունից, հայկական սփյուռքը բացառություն չէ, քանի որ դեռևս մեծ նշանակություն ենք տալիս հայկական համայնքների ոչ այնքան մտավոր, որքան ֆինանսական կապիտալի ներգրավմանը Հայաստանի տնտեսության զարգացման գործին: Թեև հայաստանյան իրականությունում հայկական սփյուռքի մտավոր ռեսուրսների ներդրման գործընթացը ֆինանսական կապիտալի համեմատ շատ ավելի բարդ է և խորքային, սակայն դրա իրացման պարագայում այն կարող է ենթադրել ակնկալվող արդյունքների բարձր արդյունավետություն և երկարաժամկետ հեռանկարներ: Հիմնական հարցերից մեկն էլ այն է, որ, թեև հայկական սփյուռքը տիրապետում է զգալի մտավոր կապիտալի, սակայն այսօր բավական բարդ է սահմանել կամ հստակեցնել՝ այդ մտավոր կապիտալի ո՞ր մասն է համարվում ազգային, որը՝ ոչ: Առաջին հայացքից և, թերևս, թյուրիմացաբար կարելի է հաստատել, որ ազգային մտավոր կապիտալի այդ հատվածի կողմերը մեր հայրենակիցներն են, հետևաբար՝ կապիտալը նույնպես հայկական է: Այն դեպքում, երբ այստեղ առաջնային խնդիրը պարզելն է, թե որքանով է հայկական սփյուռքի մտավոր կապիտալը մասնակցում Հայաստանի և համայն հայության ազգային մտավոր կապիտալի կուտակման ու զարգացման գործին: Դժբախտաբար, սփյուռքահայության մտավոր կապիտալի մեծ հատվածը ներդրվում է բնակչության երկրի տնտեսությունում, և, թերևս, քիչ ծավալն է բաժին հասնում Հայաստանի ու հայության ազգային կապիտալին⁸:

Ինչպիսի՞ն է ինտելեկտուալ միգրացիայի իրավիճակը աշխարհում: Ըստ դիտարկումների այն հասնում է մեծ չափերի և կրում շարունակական բնույթ: Սովորաբար, բարձրակարգ մասնագետները թույլ զարգացած երկրներից մեկնում են առավել զարգացածները՝ ուսուցման, մասնագիտական որակավորման բարձրացման և աշխատանքի տեղավորման նպատակով: Սակայն, առանձին դեպքերում նկատվում է ինտելեկտուալների արտահոսք այլ երկրներ: Այս երևույթի պատճառը զարգացած պետությունների տնտեսության, կրթության, գիտության և մշակույթի բնագավառներում որակյալ կադրերի գերապահովությունն է: Թերևս դրանով պետք է բացատրել, որ ասենք, Բրիտանական ԲՈՒՀ-երի տարեկան շրջանավարտների 10%-ից ավելին մեկնում են այլ երկրներ: Դրա հետևանքով ներկայումս տարբեր երկրներում ապրում և աշխատում են ավելի քան 1.1 միլ-

իոն բարձր որակավորում ունեցող բրիտանական կրթություն ստացած ուսուցիչներ, բժիշկներ, ինժեներներ: Որոշակի քանակ են կազմում նաև գիտնականները և մշակույթի գործիչները⁹:

Սովորաբար բրիտանական իշխանությունները խոչընդոտներ չեն հարուցում արտերկիր աշխատանքի մեկնողների նկատմամբ: Պատճառներից մեկն էլ այն է, որ Անգլիայի ԲՈՒՀ-երից արտասահման մեկնող շրջանավարտների մեծ մասը այլազգի են:

Հայաստանի Հանրապետությունը նույնպես որևէ խոչընդոտ չի հարուցում արտերկիր ուսուցման և աշխատանքի մեկնող Հայաստանի քաղաքացիների նկատմամբ: Ինչ վերաբերում է Հայաստանում բարձրագույն կրթություն ստացող արտասահմանյան քաղաքացիներին, ապա ԲՈՒՀ-երում ուսուցումը ավարտելուց հետո նրանք ցանկություն չեն հայտնում բնակություն հաստատել մեր հանրապետությունում՝ աշխատատեղերի սակավաքանակության պատճառով:

Ընդհանուր պատկերը այնպիսին է, որ ինտելեկտուալ միգրացիայից որոշակի վնասներ է կրում հայ հասարակական-քաղաքական կյանքը և տնտեսությունը: Սակայն, ինտելեկտուալ միգրացիայից վնասներ են կրում ոչ միայն այնպիսի փոքր երկրները ինչպիսին է Հայաստանը, այլև անգամ եվրոպական առաջատար պետությունները: Այսպես, Գերմանիայում որակյալ կադրերի արտահոսքի հետևանքով վնաս է հասցվում տնտեսությանը: 2012 թվականի տվյալներով երկրում մաքենատիկայի, ինֆորմատիկայի, բնական և տեխնիկական գիտությունների ոլորտներում թափուր է 280400 աշխատատեղ: Գերմանիայում համալրման կարիք ունի դպրոցի ուսուցիչների 20 հազար աշխատանքային տեղը: Այդ ամենի հետևանքով Գերմանիայի տնտեսությունը միայն 2011 թվականի ընթացքում կրել է 15 միլիարդ եվրոյի վնաս¹⁰:

Թվում է, թե նման իրավիճակում ընդունող երկրները խանդավառությամբ պետք է ընդունեն ինտելեկտուալ միգրանտների մուտքը: Մինչդեռ ինտելեկտուալ միգրանտների նկատմամբ ոչ միանշանակ մոտեցում են դրսևորվում ինչպես հասարակության տարբեր շերտերի, այնպես էլ իշխանությունների կողմից: Դրա պատճառներից մեկը այն է, որ շարունակաբար աճում են դեպի արևմուտք միգրացիոն հոսքերը և եվրոպացին հակված չէ որոշակի դասակարգում մտցնել միգրացիոն հոսքերի նկատմամբ: Իշխանություններն էլ իրենց հերթին չեն ցանկանում հակադրվել հասարակական կարծիքին:

Միգրացիոն համանման իրավիճակ է տիրում օվկիանոսից այն կողմը: ԱՄՆ յուրաքանչյուր տարի տարբեր երկրներից ընդունում է ինտելեկտուալ

միգրանտների երկու երրորդին¹¹ :

ԱՄՆ հարկադրված է ինչ-որ ձևով վերահսկել այդ գործընթացը: Յուրաքանչյուր տարի ԱՄՆ-ի կառավարությունը սահմանում է բարձր որակավորում ունեցող արտասահմանցի աշխատանքային միգրանտների սեփական երկրում գործելու թվաքանակը: Տարեկան նման թույլտվություն են ստանում 140 միգրանտներ, յուրաքանչյուրը վեց տարի ժամանակով: Ընդ որում, միգրանտը հնարավորություն ունի գործատուի միջնորդությամբ ստանալ ԱՄՆ-ում մշտական բնակության իրավունք¹² :

Միգրացիան զգալի դեր է խաղում ոչ միայն ԱՄՆ-ի տնտեսության զարգացմանը՝ կազմելով ընդհանուր զբաղվածների 3.2 տոկոսը, այլև նրա հարևան Կանադայի տնտեսությունում զբաղվածների 7.3 տոկոսը: Այս ցուցանիշը ավելի համեստ է եվրոպական երկրներում՝ զբաղվածների 1.7 տոկոսը :

Նկատելի է, որ այնպիսի երկրների հասարակայնությունը, ինչպիսիք են Ռուսաստանի Դաշնությունը, ԱՄՆ, Կանադան, հարգանքով են վերաբերվում օտարերկրյա այն մասնագետների նկատմամբ, որոնք իրենց գիտելիքները և հմտությունները, բարձր մշակույթը ծառայեցնում են ընդունող երկրի զարգացմանը: Ինտելեկտուալ միգրանտները ակտիվորեն ներգրավվում են գիտակրթական ոլորտի աշխատանքներում, իրականացնում մշակութային տարատեսակ միջոցառումներ: Տեղական բնակչության լայն շրջանակների հետ միգրանտների մերձեցմանը նպաստում է նրանց կողմից ընդունող երկրների ժողովուրդների սովորույթների, պատմության, մշակույթի իմացությանը: Դրական է այն, որ ինտելեկտուալ միգրանտները առանձնանում են լեզուների իմացությամբ:

Ինտելեկտուալ միգրանտների նկատմամբ բարյացկամ մթնոլորտի ձևավորմանը նպաստում է նաև այն, որ նրանք ձեռնպահ են մնում իրենց ընդունած երկրների հասարակական-քաղաքական կյանքին ակտիվորեն մասնակցելուց: Այս գործելակերպը բնորոշ է արտերկրներ ուսուցման կամ աշխատանքի նպատակով մեկնած հայ ինտելեկտուալներին: Նման վարքագիծը նպաստում է նոր միջավայրում միգրանտների առանց բարդությունների ինտեգրմանը: Սովորաբար հայ ինտելեկտուալ միգրանտների մեծ մասը, պահպանելով հիշողություններ մայր հայրենիքի հանդեպ, ակտիվորեն մասնակցում է ի պաշտպանություն Հայաստանի տարբեր միջոցառումների անցկացմանը: Նման գործելակերպը չի հակասում ընդունող երկրների շահերին, քանի որ հայերի նախաձեռնությունները իրականացվում են տվյալ երկրի գործող օրենսդրության շրջանակներում: Տեղին է հիշել այն բնու-

թագրումը, որ «Պետությունը չի կարող միգրանտներին դիտել որպես հասարակության լիիրավ անդամներ, եթե առնվազն մասամբ չի ճանաչում տարբերվելու իրավունքը»¹⁴ :

Նման դիրքորոշումն ամենևին չի արդարացնում այն դրսևորումները, երբ բնակություն հաստատելով արտերկրում որոշ էթնիկ և կրոնական խմբավորումներ փորձում են պարփակվել իրենց ավանդական ապրելակերպի շրջանակներում:

Որոշ ազգությունների միգրանտների վերը նշված պարփակ միությունները իրենց ապաստան տված երկրներում, փաստորեն, վեր են ածվում ընդդիմադիր կառույցների, որոնք ժամանակ առ ժամանակ ընդվզում են տեղի իշխանությունների և լայն հասարակության դեմ: Ըստ էության, նման միավորումների կողմից փորձ է կատարվում օտար երկրում անգամ պահպանել իրենց ինքնությունը՝ հակադրվելով տեղականին:

Հայ էմիգրանտները և առավել ևս ինտելեկտուալները, ամենասեղմ ժամկետներում ինտեգրվում են ընդունող երկրների հասարակության մեջ: Արտերկրներում հայերի բացարձակ մեծամասնությունը պահպանում են իրենց ազգային և կրոնական ինքնությունը, ամենևին չհակադրվելով ընդունող երկրի հասարակական կարգին և ձևավորված ավանդույթներին: Հայ էմիգրանտների մեծ մասը, հավատարիմ մնալով հայրենիքի արժեքներին, ընդունող երկրների արժեքները յուրացնում են որպես իրենց ինքնությունը հարստացնող կարևոր արժեհամակարգ:

Փորձը ցույց է տալիս, որ հայ ինտելեկտուալ միգրանտներն աչքի են ընկնում մասնագիտական իմացությամբ, եռանդով և ջանասիրությամբ: Այդ ամենի շնորհիվ նրանք առանց բարդությունների, կրթական, գիտական, մշակութային կապեր են հաստատում նոր միջավայրի հետ: Միաժամանակ, այնպիսի երկրներում, ինչպես ԱՄՆ-ը, Կանադան, հայ ինտելեկտուալները հարկադրված են մրցակցության մեջ մտնել ոչ միայն տեղի մասնագետների, այլև այլ երկրներից ժամանած ինտելեկտուալների հետ:

Ներկայումս նկատվում է միգրանտների աննախադեպ մեծ հոսք եվրոպական երկրներ, որը հարկադրել է Եվրամիությանը վերանայել նախորդ տասնամյակներում մշակված միգրացիոն քաղաքականությունը: Նկատելի է, որ եվրոպական երկրների հասարակության մեջ տիրապետում են երկու մոտեցումներ. հասարակության մի մասը հանդուրժողականություն է դրսևորում միգրանտների նկատմամբ, հարգում նրանց կենցաղային ու մշակութային առանձնահատկությունները: Սակայն միգրանտների հոսքի ավելացումը հանգեցրեց նրան, որ եվրոպացիների մեծ մասը հիմնավորա-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

պես փոխեց վերաբերմունքը միգրանտների նկատմամբ՝ հանդուրժողականությունից անցում կատարելով նրանց նկատմամբ բացասական վերաբերմունքի դրսևորմանը: Հասարակության լայն շրջանակներում հասունանում են տրամադրություններ թույլ չտալ միգրանտների մուտքը եվրոպական երկրներ, իսկ շատերին էլ, որոնք արդեն հաստատվել են եվրոպայում՝ արտաքսել:

Վերը նշված երկու մոտեցումները բնորոշ են Մեծ Բրիտանիային: Մեծ Բրիտանիայում էմիգրանտների հոսքի նկատմամբ առաջացել է տարակարծություն: Բրիտանացիների որոշակի մասը գտնում է, որ միգրանտների նկատմամբ անհրաժեշտ է կիրառել իրավական խիստ միջոցներ: Հասարակության փոքրաթիվ մասն էլ անհրաժեշտ է համարում միգրանտների ազգային-կրոնական խմբակցությունների անդամների կրթվածության և իրազեկության բարձրացումը¹⁵:

Հայաստանը տնտեսական, քաղաքական, հոգևոր ամուր թելերով կապված է Ռուսաստանի Դաշնության հետ: Այդ երկրում դրսևորվող շատ երևույթներ գրեթե անմիջականորեն արձագանք են գտնում մեր իրականությունում: Ուստի կարևորվում է մեր կողմից ինտելեկտուալ միգրանտների իրավիճակի քննությունը Ռուսաստանի Դաշնությունում:

Նկատելի է, որ ինտելեկտուալ միգրանտների արտահոսքը զգալի խնդիրներ է առաջացրել Ռուսաստանում: Ռուսաստանը դարձել է արևմուտքի երկրներ ինտելեկտուալ կադրերի մեծաքանակ էմիգրացիայի երկիր: Այդ էմիգրանտների շարքերում կան նաև Ռուսաստանում բնակվող կամ Հայաստանից Ռուսաստան մեկնած հայ ինտելեկտուալ էմիգրանտների որոշակի քանակություն:

Ինտելեկտուալների արտահոսքը Ռուսաստանից ոչ միայն անմիջականորեն վնաս է հասցնում երկրի տնտեսությանը, այլև գիտության, կրթության, մշակույթի զարգացմանը: Ըստ Ռուսաստանում շրջանառվող վիճակագրության բարձրորակ կադրերի էմիգրացիայի հետևանքով վերջին տարիներին Ռուսաստանի Դաշնությունում մոտ երկու անգամ կրճատվել է գիտության ասպարեզում ներգրավվածների քանակը: Ըստ որում, բացի կայացած մասնագետներից զգալի քանակ են կազմում ուսման նպատակով Ռուսաստանից մեկնող շնորհալի երիտասարդները: Նկատելի է, որ ԲՈՒՀ-ն ավարտելուց հետո նրանց մեծ մասը չի վերադառնում հայրենիք: Այսպես, ԱՄՆ-ում սովորող ռուսաստանցիների 77 տոկոսը աշխատանքի է անցնում այդ երկրում՝ պատճառաբանելով որ այնտեղ գիտական հետազոտությունների կատարման և գիտնականների կենսագործունեության ավելի լավ պայմաններ են առկա¹⁶:

Հայաստանում ինտելեկտուալ միգրացիան, ինչպես մյուս երկրներում, ընդհանուր միգրացիոն գործընթացի մասն է կազմում: Հայաստանի սահմանային էլեկտրոնային վարչության ինֆորմացիոն համակարգի տվյալներով 2014 թվականին արտաքին ուղևորների շրջանառությունը հանրապետության վերահսկիչ-թողարկման կետերում կազմել է 5510,9 հազար փոխադրում: Այդ ժամանակաշրջանում երկրում մուտք գործածների քանակը կազմել է 2734596 մարդ: Այդ ցուցանիշը գերազանցել է նախորդ տարվան 10 տոկոսով: Մեկնածների թվաքանակը 2776268 է, աճը՝ 10,7 տոկոս: Այսպիսով մեկնածների թվաքանակը գերազանցում է Հայաստանում մուտք գործածների 0,3 տոկոսով:

ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների համաձայն, Հայաստանում գիտական հետազոտություններ և մշակումներ կատարող կազմակերպությունների գիտաշխատողների թվաքանակը 2015թ. ընդամենը 5044 էր, որից 4164-ը հետազոտողներ և տեխնիկներ էին, մնացածը՝ օժանդակ անձնակազմ: Դժվար է չհամաձայնել, որ այս ցուցանիշները, մեղմ ասած, բավական համեստ են և, դժբախտաբար, համահունչ երկրում գիտության զարգացման ներկա տեմպերին: Ինչպես ցույց է տալիս համեմատական վիճակագրությունը, գիտական հետազոտություններ և մշակումներ կատարող կազմակերպությունների աշխատողների թվաքանակը վերջին տարիներին նվազման միտում է արձանագրել: Եթե 2011թ. ոլորտում ներգրավված էր շուրջ 5718 գիտաշխատող, իսկ 2013թ.՝ 5230, ապա 2015թ., ինչպես նշեցինք, գիտական հետազոտություններ և մշակումներ կատարող կազմակերպությունների աշխատողների թվաքանակը 5044 էր: Նշենք նաև, որ 2014թ. գրանցվել է ցուցանիշի շեշտակի աճ՝ 5627, որը կտրուկ նվազել է հաջորդ տարվա արդյունքներում¹⁷:

Վերը նշված վիճակագրությունը որոշակի հիմք է հանդիսանում պարզելու ինտելեկտուալ միգրացիոն իրավիճակը Հայաստանում: Ընդամենը երկուսուկես տասնամյակ առաջ այն կրում էր կանոնակարգված բնույթ: Հայաստանից արտերկրներ, գերազանցապես Ռուսաստանի Դաշնություն, ինտելեկտուալները մեկնում էին ուսումը շարունակելու, հետազոտական աշխատանքներում հմտանալու, մշակույթի ասպարեզում որակավորումը բարձրացնելու նպատակով: Տարիներ առաջ գործում էր ԲՈՒՀ-ական դասախոսների որակավորման բարձրացման համակարգ: Հայաստանից դասախոսները այդ նպատակով մեկնում էին հիմնականում Մոսկվայի և Լենինգրադի գիտական կենտրոններ:

Նկատելի է, որ Հայաստանից մասնագիտական որակավորման բարձրացման մեկնած ան-

ծինք ուսուցումից հետո վերադառնում էին հայրենիք: Այլ է իրավիճակը ներկայումս: Հայաստանից մեկնած ինտելեկտուալների մեծ մասը գերադասում է աշխատանքի անցնել ընդունող երկրում:

Հայրենիքից ինտելեկտուալների արտագաղթի դրդապատճառները համընկնում են միգրանտների մյուս խմբերի հետ: Ըստ հարցման արդյունքների 96,9 տոկոսը հայրենիքից մեկնելու գլխավոր պատճառը բացատրեց աշխատանքային գործունեությամբ: 51 տոկոսը ընդգծեց հանրապետությունում աշխատատեղերի բացակայությունը, 43 տոկոսը դժգոհեց աշխատանքի համար ոչ բավարար վարձատրությունից, իսկ 2,9 տոկոսը մեկնելու պատճառը համարեց իր համար ցանկալի մասնագիտական աշխատատեղի բացակայությունը¹⁸:

Հայաստանից մեկնող միգրանտների փոքր հատվածին կարելի է բնորոշել որպես ինտելեկտուալներ: Այսպես՝ Ռուսաստանի Դաշնությունում աշխատող հայ միգրանտների միայն 1 տոկոսն է բարձրագույն կրթությամբ: Այս առումով համեմատաբար բարվոք իրավիճակում են Ֆրանսիա և, հատկապես, ԱՄՆ մեկնած հայ աշխատավոր միգրանտները: Այսպես, Հայաստանից ԱՄՆ մեկնած հայ միգրանտների 8 տոկոսը աշխատում է կրթության, գիտության, տեխնիկայի ոլորտներում¹⁹:

Նկատելի է, որ Հայաստանից արտագաղթող բարձր որակավորում ունեցող մասնագետների նախընտրած ոլորտներն են կենսաբանությունը, ֆիզիկան, մաթեմատիկան, քիմիան, տեխնիկական գիտությունները: Նրանց շարքում գրեթե բացակայում են հասարակական և հումանիտար ոլորտի մասնագետները: Բացատրելի է, որ հիմնարար գիտությունների մասնագետներն իրենց ընդունակությունների լիարժեք իրացման համար նախընտրում են առավել զարգացած երկրները, որտեղ առկա են ժամանակակից տեխնիկական միջոցները, ներդրված են նոր տեխնոլոգիաներ: Այդ երկրներում գիտական կենտրոնները, լաբորատորիաները հազեցված են նորագույն սարքավորումներով և տեխնիկական միջոցներով:

Արտերկրներ աշխատանքի մեկնող հումանիտար ոլորտի մասնագետների սակավաքանակությունը կարելի է բացատրել նորագույն սարքավորումների անհրաժեշտության բացակայությամբ: Գիտակցվում է նաև, որ արտերկրներում բացակայում է հումանիտար և հասարակական գիտությունների մասնագետների պահանջարկը:

Հայաստանից ինտելեկտուալների միգրացիան բացասաբար է ազդում կրթության, գիտության ոլորտի զարգացմանը և ընդհանրապես հասարակության անդամների անձնական մշակույթի բարձրացմանը: Միաժամանակ, դրականորեն պետք է գնահատել այն երիտասարդներին, որոնք ար-

տերկրների առաջատար ԲՈՒՀ-երում ուսուցանելուց հետո վերադառնում և աշխատանքային գործունեություն են ծավալում հայրենիքում:

Հանրապետությունում առանձին խումբ են կազմում կրթության և գիտության նախարարության կողմից միջալետական ծրագրերի շրջանակներում հայ երիտասարդների ուսուցման նպատակով մեկնումը արտերկրներ: 2010 թվականին նրանց քանակը կազմել է 180, 2011 թվականին՝ 199, 2012 թ. 253, 2013 թ. 197, 2014 թ. 253 սովորող, ընդամենը 1082 սովորող: Միայն պայմանականորեն նրանց կարելի է համարել միգրանտներ, քանի որ ուսուցման մեկնողների բացարձակ մեծամասնությունը ուսման ավարտից հետո վերադառնում են հայրենիք:

Հեռանկարային է «Լույս» հիմնադրամի կրթական ծրագրի իրականացումը: «Լույս» հիմնադրամը 2009 թվականից առ այսօր արտասահմանյան առաջատար ԲՈՒՀ-երում սովորելու է գործուղել 358 ուսանող և շրջանավարտ:

«Լույս»-ի հովանավորության ներքո են 15 երկրների քաղաքացի հանդիսացող հայ երիտասարդներ: Նրանք սովորում կամ ավարտել են ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Կանադայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի և այլ երկրների առաջատար համալսարանները: Ըստ ՀՀ կրթության և գիտության նախարարության տվյալների՝ արտերկրներում սովորող հայ երիտասարդների գերակշիռ մասը հմտանում է տնտեսագիտության, բիզնեսի, կառավարման ասպարեզներում: Անհամեմատ սակավ են ճարտարագիտության, շրջակա միջավայրի և բնագիտության բնագավառներում սովորել նախընտրողների քանակը:

Արտերկրներում հայ ուսանողների ուսուցումը իրականացվել է եռաստիճան մակարդակով: Այն է՝ բակալավրիատ, մագիստրատուրա և ասպիրանտուրա: «Լույս»-ի ուսանողների ակադեմիական աստիճանը բնորոշվում է հետևյալ կերպ՝ 63 երիտասարդներ բակալավրներ են, 211 մագիստրանտներ և 34 ասպիրանտներ: Ասպիրանտների համեմատաբար սակավաքանակության հետևանքով քիչ են գիտական ատենախոսություն պաշտպանածները:

Հետաքրքրություն է ներկայացնում արտերկրներում ուսուցման մեկնած հայ երիտասարդների սեռական կազմը: Նրանցից 174-ը, կամ 57 տոկոսը, արական սեռին են պատկանում, 133-ը, կամ 43 տոկոսը, իգական սեռի ներկայացուցիչներ են: Ուսանող աղջիկների զգալի քանակությունը վկայում է այն կարծրատիպի վերացումը, երբ իգական սեռի ներկայացուցիչները խուսափում էին ուսուցման կամ աշխատանքի նպատակով արտերկրներ միայնակ մեկնելուց:

«Լույս»-ի հայաստանաբնակ շրջանավարտները մասնագիտական գործունեություն են ծավալում ինչպես պետական մարմիններում, այնպես էլ մասնավոր հատվածում՝ նախարարություններ, բանկեր, ավագ դպրոցներ և այլ: «Լույս»-ի շրջանավարտներից նրանք, ովքեր գերադասել են արտերկրներում բնակություն հաստատել, աշխատում են բիզնես միավորումներում, իսկ առանձին դեպքերում տեղական կառավարման մարմինների համակարգում:

Մարդասիրական է, որ «Լույս» հիմնադրամը նախապայմաններ չի առաջադրում ծրագրում ընդգրկված ուսանողներին: Արտերկրներում կրթությունը ավարտելուց հետո հայ երիտասարդները ազատ են իրենց գործունեության վայրի և ոլորտի ընտրության հարցում: Շրջանավարտները, ըստ իրենց նախասիրության, կարող են վերադառնալ Հայաստան, կամ աշխատել արտերկրներում:

Բացատրելի է, որ շրջափակման մեջ գտնվող և տնտեսության զարգացման ասպարեզում զգալի խնդիրներ ունեցող Հայաստանը որպես մշտական բնակության վայր հրապուրիչ չէ այլ երկրների քաղաքացիների համար: Սակայն, նույնը չի կարելի ասել Հայաստանի Հանրապետության ԲՈՒՀ-երում սովորելու եկած արտասահմանցի ուսանողների վերաբերյալ: 2000 թվականից սկսած ՀՀ-ում շարունակաբար ուսուցման են գալիս օտարերկրյա երիտասարդները: Եթե 2000 թվականին նրանց քանակը կազմում էր ընդամենը 1302, ապա հետագա տարիներին նրանց թվաքանակը շարունակաբար աճեց: Ըստ ՀՀ կրթության և գիտության նախարարության տվյալների հանրապետության ԲՈՒՀ-երում 2013 թվականին արդեն սովորում էին 3655

օտարերկրացի ուսանողներ:

Բավականին բազմազան է Հայաստանում սովորելու եկած օտարերկրյա ուսանողների երկրների աշխարհագրությունը: Այն ընդգրկում է գրեթե բոլոր աշխարհամասերը՝ Ռուսաստան, Վրաստան, Ուկրաինա, Ղազախստան, Հունաստան, Հնդկաստան, ԱՄՆ, Լատվիա, Լիբանան և անգամ Ճապոնիա ու Չինաստան:

Սովորողների գերակշիռ մասը Ռուսաստանի Գաղտնությունից և Վրաստանից են: Որպես կանոն, նրանք հայ երիտասարդներ են, որոնք ցանկություն են հայտնել բարձրագույն կրթություն ստանալ մայր հայրենիքում: Նույնը կարելի է ասել Սիրիայից և Լիբանանից ժամանած հայ երիտասարդների մասին: Միաժամանակ, ՀՀ ԲՈՒՀ-երում սովորում են այլազգի երիտասարդները: Առանձնապես մեծ է ազդությամբ հնդիկ ուսանողների քանակը:

Արտասահմանցի ուսանողների հոսքը ՀՀ աջակցում է ոչ միայն հայ երիտասարդության միջազգային կապերի ընդլայնմանը, այլև նպաստում հանրապետության ԲՈՒՀ-երի ֆինանսական իրավիճակի բարելավմանը և ուսուցման բազայի նորագույն սարքավորումներով հագեցմանը:

Օրախնդիր է երիտասարդ հայ ինտելեկտուալներին հանրապետությունում աշխատանքով ապահովելու ծրագրերի մշակումը և նրանք գործողության մեջ դնելը: Այն կարելի է իրականացնել ԲՈՒՀ-երի, պետական հիմնարկների և մասնավոր հատվածի սերտ համագործակցությամբ:

¹ Митин Д.Н. «Интеллектуальная миграция: сущность, последствия и пути решения», Вестник РУДН, серия Политология, 2011г., No 1, ст. 41. (<https://elibrary.ru/item.asp?id=15602822>).

² Տե՛ս, նույն տեղում:

³ Мордовченков Н.В., Паленова Т.В., Поляков В.М. "Людвиг Эрхард и социальная рыночная экономика в Германии: Инфраструктурный аспект" (Азимут научных исследований: экономика и управление. 2015г., No 3 (12), С. 67) /<http://elibrary.ru/item.asp?id=24600908/>

⁴ Корчагин Ю. А. Широкое понятие человеческого капитала.- Воронеж: ЦИРЭ /<http://www.lerc.ru/?part=articles&art=3&page=22/>.

⁵ Патырбасва К.В.: "Человек и общество в постмодернистской концепции З. Баумана", снос. 5. (http://www.psu.ru/files/docs/science/books/sborniki/Obsectvo%20na%20ruberze%20epoch_4_2013.pdf#page=72)

⁶ Ազգային մտավոր կապիտալը տվյալ ազգ-պետությունում մտավոր ռեսուրսների ամբողջությունն է (նյութական և հոգևոր արդյունքները) / Կարեն Վերսանյան «Ուղեղների արտահոսք» հասկացության շուրջ», http://www.noravank.am/arm/issues/detail.php?ELEMENT_ID=15585/

⁷ Интеллектуальная миграция в современном мире. М., 2014г., стр. 13.

⁸ Կարեն Վերանյան «Ուղեղների արտահոսք» հասկացության շուրջ», http://www.noravank.am/arm/issues/detail.php?ELEMENT_ID=15585:
⁹ Интеллектуальная миграция в современном мире. М., 2014г., стр. 40.
¹⁰ Интеллектуальная миграция в современном мире. М., 2014г., стр. 149.
¹¹ Տե՛ս, նույն տեղում, էջ 40:
¹² Տե՛ս, նույն տեղում, էջ 121:
¹³ Տե՛ս, նույն տեղում, էջ 127:
¹⁴ Малахов В. Понаехали тут... очерки о национализме, расизме и культурном шлюрализме. М., 2007, стр. 134
¹⁵ Сахарова В.В. Мультикультуризм и политика интеграции иммигрантов. Сравнительный анализ опыта ведущих стран запада. Санкт-Петербург, 2011г., стр. 114.
¹⁶ Интеллектуальная миграция в современном мире. М., 2014г., стр. 69.
¹⁷ <http://armstat.am/file/doc/99499403.pdf>
¹⁸ Տե՛ս, Միգրացիա և մարդկային զարգացում, Երևան, 2009թ., էջ 68:
¹⁹ Տե՛ս, Միգրացիա և մարդկային զարգացում, Երևան, 2009թ., էջ 163:

Ашот Айрапетян

Кандидат юридических наук, доцент.

Докторант академии государственного управления РА

РЕЗЮМЕ

Интеллектуальная миграция в Республике Армения и конституционно-правовые аспекты ее управления

В статье исследуются основные проблемы интеллектуальной миграции в Республике Армения в связи с ее конституционно-правовыми аспектами. В рамках статьи делается ссылка на место и роль знаний в условиях постмодернистского общества, а также на основные проблемы “конкурентоспособности социума” и управления интеллектуальной миграцией.

Ключевые слова: “утечка мозгов”, интеллектуальная миграция, человеческий капитал, постмодернистское общество, социальная рыночная экономика, “конкурентоспособность социума”.

Ashot Hayrapetyan

PhD in Law, Associate professor.

Doctoral in the Public Administration Academy of the Republic of Armenia

SUMMARY

Intellectual Migration in the Republic of Armenia and the Constitutional-Legal Aspects of its Managing

The article examines the main issues concerning intellectual migration in the Republic of Armenia in connection with their constitutional-legal aspects. In the framework of the article, the place and role of knowledge in post-modern society are being discussed, as well as the main issues concerning the “competitiveness of social environment” and managing intellectual migration.

Keywords: “brain drain”, intellectual migration, human capital, postmodern society, social market economy, “competitiveness of social environment”.